

---

---

**ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՕՐԵՆՄԱՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ԷՖԵՆԴՅԱՆ Պ. Ս., ԴԱՎԹՅԱՆ Ս. Ռ.

*Մխիթար Գոշի Դատաստանագրքի մի շարք հոդվածներ վերաբերում են վարչական միավորների և անշարժ գույքի սահմանների օրենսդրական կարգավորման խնդրին: Այդ հոդվածները, չնայած իրենց սահմանափակ ծավալներին, կարգավորում են ոչ միայն սահմանային հարաբերությունները իրար կից վարչական և անշարժ գույքի միավորների միջև, այլև վկայում են կադաստրային բաժանումների մասին: Համաձայն այդ հոդվածների (գլուխ ՃԷ՝ «Սահմանների մասին, թե որպես է դրվում», գլուխ ՃՂԴ՝ «Սահման փոփոխողների մասին», գլուխ ՄԺԶ՝ «Նոր գյուղ կառուցողների մասին», գլուխ ՄԽԷ՝ «Մինոռի մասին, որ սահմաններն են»), սահմանները լինում են 4 տեսակի՝ գավառների, գյուղերի (համայնքների), հողամասերի, շենքերի և շինությունների (տների, որմերի)<sup>1</sup>:*

*Համաձայն ՄԽԷ գլխի՝ գավառների սահմանները տարվում էին լեռներով, գետերով և արձաններով<sup>2</sup> (սահմանանշաններով): Տեղանքի նույն տարրերով էին անցկացվում նաև գյուղերի (համայնքների) սահմանները: Գյուղերի սահմանները ստորադաս էին համարվում գավառների սահմանների, իսկ անշարժ գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) սահմանները՝ գյուղերի և գավառների սահմանների նկատմամբ. «Եվ գյուղերը, որ կառուցված են երկու կամ երեք գավառների սահմանների վրա, զույգ բաժանվեն..., նույնկերպ և անդաստանները և այլն, որ գյուղերի սահմաններում են, նույնպես և ծառերը, որ անդաստանների սահմաններում են... Ըստ այդմ լինի տների, որմերի և այդպիսի բաների համար էլ»<sup>3</sup>:*

*Դատաստանագրքի ՄԽԷ գլխի անվանումը՝ «Մինոռի<sup>4</sup> մասին, որ սահմաններն են», և դրան հաջորդող նկարագրությունը վկայում են, որ «սինոռ» տերմինով նշվել են գավառների և գյուղերի «հաստատված» սահմանները: Պահպանված առանձին փաստաթղթերը վկայում են, որ այդ տերմինը տարբեր դրսևորումներով (սինոռ, սինոռ, սնոռ) լայնորեն օգտագործվել է Հայաստանի տարբեր վայրերում, ընդհուպ մինչև XVII դ. 60-ական թթ.: Այսօր էլ այդ տերմինը հաճախ օգտագործվում է բանավոր հաղորդակցության ժամանակ:*

---

<sup>1</sup> Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, Ե., 2008, էջ 176:

<sup>2</sup> Հ. Աճառյանը այլ իմաստներից բացի (կոթող, մահարձան, մեծ քար, կուռք), արձան տերմինի համար տալիս է նաև սահմանաքար նշանակությունը [Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 325]:

<sup>3</sup> Մխիթար Գոշ, նշվ. աշխ., էջ 176:

<sup>4</sup> Մինոռ տերմինը, ըստ Հ. Աճառյանի, հուներենից թարգմանաբար նշանակում է կից սահման (ՀԱԲ, հ. 3, Ե., 1979, էջ 217):

Չնայած այն բանին, որ հայ միջնադարյան մատենագրության մեջ շատ քիչ են հանդիպում սահմանների նկարագրությամբ փաստաթղթեր, այնուամենայնիվ, եղածն էլ բավարար է որոշակի եզրակացություններ անելու համար: «Հիշատակարան Մանահնոյ վանից»-ում, Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» մեջ, Մատենադարանի մի քանի ձեռագրերում առկա փաստաթղթերը վկայում են սահմանների միօրինականացված նկարագրության մասին: Ընդ որում, հայոց միջնադարյան պատմագրությանը հայտնի փաստաթղթերը թվագրվում են տարբեր ժամանակներով՝ սկսած X դ. մինչև XVII դ.: Այդ փաստերը վկայում են, որ մինչև Միսիթար Գոշի Դատաստանագրքի ստեղծումը, սահմանների նկարագրությունները հաստատվել են այդ ժամանակ գործող սովորության իրավունքի նորմերի պահանջների համաձայն:

Միջնադարյան Հայաստանի պատմագիրներից Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» վարչատարածքային և անշարժ գույքի միավորների սահմանների նկարագրության մի իսկական հանրագիտարան է. այստեղ բերված բազմաթիվ փաստաթղթերը վկայում են, որ անշարժ գույքի հետ կապված բոլոր գործարքները ուղեկցվել են սահմանների նկարագրության տվյալներով: Այսինքն, փաստաթղթերի մեջ բաղկացուցիչ մաս է դարձել սահմանների (սահմանագծերի) նկարագրությունը:

Հայ պատմագրությանը հայտնի մի քանի փաստաթղթեր վկայում են, որ գոյություն է ունեցել փաստաթուղթ (չի բացառվում նաև քարտեզի կամ սխեմայի տեսքով), որտեղ նկարագրված և հաստատված են եղել Հայաստանի մի շարք տարածքների (Սյունիք, Լոռի, Վասպուրական և այլն) գյուղերի (համայնքների) վարչական սահմանները: Այդպիսի եզրահանգման ենք գալիս՝ ուսումնասիրելով այն փաստաթղթերը, որտեղ ուղղակիորեն նշվում են գյուղերի անունները՝ առանց մանրամասն նկարագրելու սահմանագծերը. «Տվեցի նաև հինգ գյուղերի սահմանները՝ Կոթաքարի, Աղաբո վանքի, Շավառնահողի, Գետամեջի, Կթանոցի, ...»<sup>5</sup>, կամ էլ օգտագործվում են «իր բոլոր սահմաններով» կամ բովանդակությամբ դրան մոտ այլ արտահայտություններ՝ «...Հալիք գյուղը՝ իր բոլոր սահմաններով»<sup>6</sup>, «...Արաստամուղ գյուղը նրա՝ մինչև այժմ վայելած բոլոր սահմաններով...»<sup>7</sup>, «Գեղարքունիք գավառի Կտկույք գյուղը... շրջակա իր բոլոր սահմաններով»<sup>8</sup>, «...Ուձուն իւր ամեն բոլոր սահմանաւն, զԽոշոռնի՝ լերամբ եւ դաշտով իւր ամենայն սահմանովն ի Տոբրթայ, զՇուլաւեր իւր ամեն սահմանաւն»<sup>9</sup>: Մի շարք փաստաթղթերում սահմանների նկարագրությունը ուղեկցվում է նաև սահմաններում գտնվող բնական միջավայրի տարրերի, հողատեսքերի, այլ անշարժ

<sup>5</sup> Ստեփանոս Օրբելյան, *Սյունիքի պատմություն*, Ե., 1986, էջ 181:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 216:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 235:

<sup>9</sup> Ղաֆադարյան Կ., *Սանահինի վանքը և նրա արձանագրությունները*, Ե., 1958, էջ 75:

գույքի մատնաշումով. «...հանձնեցի իր բո-լոր սահմաններով՝ լեռնով, դաշտով, հողով ու ջրով, այգիներով ու ընկուզենիներով, ջրաղացներով...»<sup>10</sup>, «Արիտը իր շրջակա բոլոր սահմաններով՝ հողով ու ջրով, ցանքերով և իրեն պատկանող ամեն ինչով...»<sup>11</sup>, «Չուվա գյուղը՝ իր բոլոր սահմաններով, հողով, ջրով, ամբողջ այգիներով»<sup>12</sup>: Եթե համայնքի սահմաններում առկա են այլ սեփականատերերին պատկանող տարածքներ, ապա փաստաթուղթը կազմելիս անպայման նշվում է նաև այդ մասին. «...Բոլորքարը՝ իր ողջ սահմաններով, բացի Նորիքի վանքի բաժնից...»<sup>13</sup>: Միննույն փաստաթղթում նշվել են նաև տարբեր մեծություններ ունեցող սեփականության միավորների սահմանների մասին տվյալներ. «...ինքնակամ տվեցի ...վեց գյուղ՝ Շնհերը, Խոտ ավանը՝ իր սահմաններով, լեռնով ու դաշտով, մեր ձեռքով տնկած այգիները Խոտագետում և Խոտում, Ցուրը և Հարժիքը՝ իրենց սահմաններով, որոնց կեսը փողով էի գնել, Բորտին, Քեթիվանքը՝ իրենց սահմաններով»<sup>14</sup>:

Առանձին գյուղերի (համայնքների) սահմանների մանրամասն նկարագրությունը, մեր կարծիքով, կարող է մի քանի պատճառների հետևանք լինել՝

- տվյալ պահին կամ ոչ վաղ անցյալում վիճելի սահմանների գոյության,
- ընդհանուր տարածքից որևէ հատվածի առանձնացման, այսինքր՝ նոր հողամասի ձևավորման,

- գործարքի նշանակությունից (հիմնականում՝ առքուվաճառքով իրականացված գործարքներ) և բնույթից ելնելով:

Վիճելի սահմանների նկարագրության օրինակներ կան Մատենադարանում պահվող մի քանի ձեռագրերում, որոնք ներկայացրել է Լ. Խաչիկյանը «Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը» ուսումնասիրությունում: Այդպիսի վավերագրերը մեծ մասամբ նկարագրում են վիճելի սահմանների հետ կապված հարցերը. «Ի թվ. Հայոց ՋԼԶ (1487): Այս է վանից սնօր կնգուղօն՝ արդի եոր եւ սասմահ իսաչ եւ Քարաշար եւ Կուսանաց սար. եւ գայ ձորն. ձորէ մինչեւ ի իսաչի արդի ճանապ/// էս մինչեւ Տօրուսօ արդի գլօխ»<sup>15</sup>: Վեճերը եղել են ինչպես հարևան գյուղական համայնքների, այնպես էլ վանական հաստատությունների և գյուղական համայնքների միջև:

Ընդհանուր տարածքից որևէ հատվածի առանձնացման համար որպես օրինակ կարող է ծառայել Փիլիպե իշխանի կողմից Բերդկաներիչ գյուղի կեսը 939 թ. Տաթևի վանքին նվիրաբերելու վերաբերյալ փաստաթուղթը. «Մրա սահմանն էլ այս է՝

<sup>10</sup> Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 237:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 271:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 382:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 253:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 333:

<sup>15</sup> Խաչիկյան Լ., Աշխատություններ, հ. Բ, Ե., 1999, էջ 325:

Ծիրանահողով դեպի ցած, մինչև գետը, դեպի վեր, մինչև՝ Կատար, գետից դեպի Մենյակ, Մենյակով մինչև ձորը, այստեղից էլ՝ մինչև Գավակ»<sup>16</sup>:

Առքուվաճառքով իրականացված գործարքներից նշենք մեկը՝ կապված 939 թ. Արծիվ գյուղը Տաթևի վանքին վաճառելու հետ՝ «Իսկ [Արծիվ գյուղի] սահմանները սրանք են՝ արևելյան կողմից Հարծիքից ու Բերդկաներիցից եկող ճանապարհների միացքը, որ հասնում է մինչև գետը, այնտեղից մինչև գյուղագլխի բլուրը, այնտեղից ջրվեժով մինչև Մտերջաց գավակ և ջրբաժան գծով մինչև Վարդանամարգի ձորակը, այնտեղից մինչև Արծիվկատար. արևմտյան կողմից՝ Լորաձորը, մեծ սարով. հարավային կողմից՝ Հարծիքը, որի ճանապարհից բնասահմանը ձգվում է ձորով վար, մինչև Մնաջուր, իսկ ի վեր՝ դեպի սարը՝ Վանաց ձորի բնասահմանով»<sup>17</sup>:

Սահմանների նկարագրությունները ձևակերպվում են տարբեր տեսակի փաստաթղթերի ձևով (կալվածագիր, կտակագիր, միաբանագիր, շնորհագիր և այլն): Դրանք կարող են հանդես գալ որպես առանձին փաստաթուղթ կամ կազմել որևէ ընդարձակ փաստաթղթի մաս: Առաջին դեպքում այն սահմանի (սահմանների) պարզ նկարագրություն է, իսկ երկրորդ դեպքում՝ սահմանների նկարագրությունը կազմվել է որևէ տեսակի գործարք (առքուվաճառք, նվիրատվություն և այլն) իրականացնելու համար: Ընդ որում, սահմանների նկարագրության միևնույն սկզբունքն է կիրառվել ինչպես վարչա-տարածքային, այնպես էլ անշարժ գույքի միավորների սահմանագատման ժամանակ: Միջնադարում այդ միավորները հաճախ համընկել են, քանի որ ամբողջական գյուղեր (համայնքներ) եղել են անշարժ գույքի միավորներ, այսինքն՝ մեկ սուբյեկտի սեփականություն, և այդ վիճակը Հայաստանում շարունակվել է մինչև XX դ. 20-ական թվականները:

Փաստաթուղթը, որտեղ սահմանների նկարագրությունը ընդհանուրի մաս էր կազմում, բաղկացած էր 8 մասից՝

1. փաստաթուղթը կազմելու ժամանակաշրջանը,
2. փաստաթուղթը կազմելու նպատակը (տվյալ դեպքում՝ սահմանագծումը),
3. փաստաթուղթը կազմողների անունները և տիտղոսները (եթե այդպիսիք կային),
4. վարչատարածքային կամ անշարժ գույքի միավորի սահմանների նկարագրությունը,
5. անեծքների բաժինը,
6. փաստաթուղթը հաստատողների անունները և տիտղոսները,
7. փաստաթուղթը կազմելուն ներկա վկաների անունները և նրանց տիտղոսները:
8. փաստաթուղթը կազմելու և հաստատելու ժամանակը:

Փաստաթուղթը կազմելու ժամանակաշրջանը նշվել է՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում Հայաստանի տարածքում իշխանության գլուխ կանգնած

<sup>16</sup> Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 196:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 196:

անձանց և նրանց տիտղոսները՝ «Թամարի որդի Լաշայի թագավորության, Շահանշահի՝ Հայաստանի և Վրաստանի ամիրսպասալարության ու նրա հորեղբայր Իվանեի արթրեկության ժամանակ»<sup>18</sup> կամ «Ի թագաւորութեան Պարսից երկրորդ Շահ-Ապագին եւ Վրաց թագաւորութեան Բագրատունեաց Ռօստով խանին»<sup>19</sup>:

Սահմանների նկարագրություն պարունակող փաստաթղթերը կազմվել են երկու նպատակով՝

- հաստատել (վերահաստատել) գոյություն ունեցող սահմանները. այդ դեպքում տվյալ փաստաթուղթը համարվել է ամբողջական,

- հաստատել (վերահաստատել) անշարժ գույքի հետ կապված որևէ գործարք (առքուվաճառք, նվիրատվություն, կտակ և այլն). այս դեպքում փաստաթուղթը տվյալ գործարքի մաս է կազմել:

Փաստաթուղթը կազմելուն մասնակցել են նվազագույնը երկու անձինք: Ընդ որում, որքան մեծ է եղել գործարքի կամ հարցի հնչեղությունը, այնքան շատ թվով մարդիկ են մասնակցել փաստաթուղթը կազմելու աշխատանքներին: Օրինակ, Տաթևի վանքին 906 թ. հանձնված կալվածագիրը կազմելուն մասնակցել են մի քանի տասնյակ անձինք, որոնցից նշված են միայն 9 մասնակիցների անունները. «...Սյունյաց Հայկազուն իշխաններս՝ Փիլիպեի որդի իշխան Աշոտս և իմ որդիներ Սմբատը, Սահակը, Բաբկենը, իշխան Գրիգոր Սուրբանը և իր եղբայրներ Սահակն ու Վասակը, իշխան Չագիկն ու իր որդի Ջեվանշիրը և մեր այլ ազատներն ու ազգականները...»<sup>20</sup>: Իսկ Ղուզանի գյուղի և Եպիսկոպոսի գյուղի սահմանը հաստատելու վճռի միաբանագրին մասնակցել են չորս անձինք. «Պարոն Ղափարը, Եկանը, Թամազը և Արդուրի որդի Սարգիս եպիսկոպոսը»<sup>21</sup>:

Փաստաթղթերի մեջ սահմանների դիրքի որոշմանը բավական մեծ տեղ է հատկացվել: Դրանք իրենց ծավալով կազմում են փաստաթղթերի հիմնական մասը:

Ստեփանոս Օրբելյանը «Սյունիքի պատմության» մեջ բերում է գյուղերի (համայնքների) վարչական սահմանների նկարագրության մի շարք օրինակներ. «Արուքսի սահմանները սրանք են. արևելյան կողմից՝ Կշտամուքն է սահմանակից, արևմտյան կողմից Հմանդրախտն է նույն Սուրբ խաչի սահմանը, հարավային կողմից [բաժանող գիծն անցնում է] հին առվով մինչև Բեխի սահմանը, հյուսիսային կողմից Կավարտի սահմանով է»<sup>22</sup>: Երբեմն երկարաշունչ նկարագրությունների փոխարեն գյուղերի սահմանների նկարագրությունները կազմվել են համառոտ տարբերակով՝ վկայակոչելով միայն հարակից գյուղերի անվանումները: Ստեփանոս Օրբելյանը այդպես է ներկայացրել Նորաշինիկ գյուղի սահմանները. «Նրա սահմանները սրանք

<sup>18</sup> Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 294:

<sup>19</sup> Յիշատակարան Սանահնոյ վանից, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007, էջ 146:

<sup>20</sup> Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 212:

<sup>21</sup> Յիշատակարան Սանահնոյ վանից, էջ 146:

<sup>22</sup> Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 203:

են՝ արևելյան կողմից Տորվանուտի սահմանը, հյուսիսից՝ Ծորի, արևմուտքից՝ Տրի և Արտավազուց, հարավից՝ Կերեն և Բերքնի»<sup>23</sup>:

Վերոհիշյալ օրինակները ցույց են տալիս, որ սահմանների նկարագրության ժամանակ հաճախակի է հորիզոնի կողմերի վկայակոչումը, որը ենթադրում է նաև քարտեզագրական գիտելիքների և համապատասխան մասնագետների առկայության մասին: Չնայած այն բանին, որ փաստաթղթերին ուղեկցող քարտեզներ չկան (կամ չեն պահպանվել), այնուամենայնիվ, կարծում ենք, որ գոյություն է ունեցել քարտեզագրական ծառայություն, որի գործառնությունների մեջ է եղել սահմանագծման համար ելակետային նյութերի նախապատրաստումը: Առանց համապատասխան ծառայության և մասնագետների անհնար էր իրականացնել սահմանագծման աշխատանքներ: Իսկ մասնագետներ պատրաստվել են միջնադարյան Հայաստանի ուսումնական հաստատություններում, որտեղ ուսումնասիրել են նաև երկրաչափություն: Հայտնի է, որ դեռևս XI դ. Գրիգոր Մագիստրոսը հունարենից հայերեն է թարգմանել Եվկլիդեսի «Տարերք երկրաչափությանը»: Կան ենթադրություններ, որ «Եվկլիդեսի երկրաչափությունը հնում թարգմանված է եղել ամբողջությամբ»<sup>24</sup>: Միջնադարյան Հայաստանում քարտեզների (այսօրվա հասկացողությամբ՝ կադաստրային) առկայության մասին է վկայում Գ. Զարբ-հանայանը. «Չամէնայն ինչ, որ հրամայեն թագաւորք, եւ զամենայն ինչ, որ միանգամ լինի առաջի նոցա, գրի եւ դնի իր տունս յիշատակաց... Եւ եղին ի տանն յիշատակաց քարտիսից, ուր դնին մատեանք եւ օրէնք արքունականք, եւ որք գնեն եւ վաճառեն եւ գրին ի միջի նոցա մուրհակք հաստատութեան, անդ պահի հաստատութեամբ առանց արհամարհանաց»<sup>25</sup>:

Սահմանների նկարագրության նույն սկզբունքը կիրառվել է նաև սեփականություն հանդիսացող տարածքների սահմանները, մասնավորապես վանական հաստատությանը պատկանող սեփականության սահմանը նկարագրելու ժամանակ: Հայ պատմագրության մեջ սահմանների վերաբերյալ առավել ամբողջական փաստաթուղթը Տաթևի շրջակա սահմանների վավերագիրն է՝ «Գիր վճռի շրջակա սահմանին Տաթևույ», որը կազմվել է 906 թ. Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու նավակատիքի ժամանակ: Ութ օրվա ընթացքում (նավակատիքը տևել է այդքան ժամանակ) Տաթևի վանքին կալվածք նվիրաբերելու համար Սյունյաց իշխանները՝ Փիլիպեի որդի իշխան Աշոտը, նրա որդիները՝ Սմբատը, Սահակը, Բաբկենը, իշխան Գրիգոր Սուփանը և իր եղբայրներ Սահակն ու Վասակը, իշխան Չագիկն ու իր որդի Ջևանշիրը և նրանց ազգականներն ու ազատները կազմում են հանձնախումբ: Վերջինիս անդամները, ինչպես նշում է Ստեփանոս Օրբելյանը, անցնում են ողջ

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 198:

<sup>24</sup> Արքահայկյան Ա., Երևան, Ե., 1983, էջ 75:

<sup>25</sup> Զարբհանայան Գ., Հայկական հին դպրութեան պատմություն, Դ-ԺԳ դդ., Վենետիկ, 1886, էջ 162:

սահմանագծով, և որոշում են Տաթևի վանքին հատկացվելիք տարածքի սահմանները: Ութ օրը բավարար ժամանակահատված չէր ողջ սահմանագծով (որը կազմել է մոտ 50 կմ, ընդ որում, այն անցել է լեռնագնացի հմտություն պահանջող տեղանքով) անցնելու համար, որը ևս ապացույց է այն բանի, որ առկա են եղել նախապես պատրաստված քարտեզագրական նյութեր:

Ստեփանոս Օրբելյանը Տաթևի վանքին 906 թ. նվիրաբերված տարածքի սահմանները նկարագրում է հետևյալ կերպ. «...սահմանները, որոնք այսպիսիք են. արևմտյան կողմից՝ սկսած մեծ ու գլխավոր Գազրույլ սարից, ջրվեժով մինչև փոսի սահմանը, որը Լորաձորի սահմանն է. հյուսիսային կողմից՝ բարձրադիր բնասահմանով դեպի ցած, մինչև գետը, Խոտի դիմաց, գետով մինչև Խոտանան, գետն անցնելով Ավազյաց փոսը դուրս եկող փոքր ձորակով, Խոզաց բլրակով, Բացահորի նույն բարակ ճանապարհով, ոչ խոր, անջուր ձորակով (իջնում է) ցած՝ Դեղնաձոր, մինչև կամուրջը, կամուրջից էլ՝ Քարաձոր, Քարաձորի մեծ բնասահմանով մինչև սարը և բուն ճանապարհը, որ սարով գալիս է Հարսնավազ, Հարսնավազի ձորակով, ճանապարհի կողքի եկեղեցու մոտով, սալքարով հատելով մեծ ձորը՝ հասնում է միայնակ քարափին, որ գտնվում է մեծ ձորի այն կողմում. կտրելով մեծ տափը հասնում է երկար խաչին, ջրվեժով՝ մինչև մեծ փոսը և (ջարունակվում) մինչև Բաղաց ձորից եկող ճանապարհը, այնտեղից էլ՝ մինչև նույն Գազրույլ լեռը»<sup>26</sup>:

Հիշյալ բոլոր կետերը տեղադրել ենք խոշորամասշտաբ տեղագրական քարտեզի վրա. հատկացված հողամասի մակերեսը կազմել է 132 քառ. կմ տարածք:

Անեծքների բաժինը սովորաբար ունեցել է ստանդարտ տեսք, այն դատապարտման ու պատժի է արժանացրել պայմանագիրը խախտողին՝ վկայակոչելով ահեղ դատաստանը, տարաբնույթ աղետներ և այլն. «Ոչ ոք չհամարձակվի սրան հակառակվել... Իսկ եթե մեկը մերոնցից կամ օտարներից, ավագներից կամ հարկահավաքներից և ավատառուներից կամ տանուտերերից դեմ դուրս գա, Սուրբ Երրորդությունից բաժանված լինի, երեք սուրբ ժողովներից՝ նզովված, Հուդայի, խաչագողերի և այլ չարագործների հետ դատապարտվի ու պատժվի: Եվ եթե մահմեդական պաշտոնություն փոխարինի, ու հափշտակել ջանացող հանդգնողներ լինեն, իրենց կրոնով անիծվեն ու հավատակորույս լինեն, փեղամբարից մերժված, ալլահին, հրեշտակներին ու հոգևոր հայրերին ուրացած լինեն, նրանց սերունդներն անարգված լինեն, նրանց հալալը հարամ լինի, և մինչև հազար տարին անեծքը մնա նրանց վրա. նրանց համար երկինքը անձրև չթափի, հողը՝ կանաչ չձյարձակի»<sup>27</sup>:

Սահմանների նկարագրությունները հաստատել (վավերացվել) են ինչպես բարձր իշխանությունները՝ թագավորը, կաթողիկոսը, գահերեց իշխանները, այնպես էլ նրանց կողմից նշանակված անձինք: Կիրակոս Գանձակեցին, նկարագրելով Նոր Գետիկի վանքի հետ կապված իրադարձությունները, նշում է «...Եւ ընծայեցին եկեղեցւոյն

<sup>26</sup> Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 212-213:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 213:

սահման ջրադարձիք՝ լեռնե ի լեռուն»<sup>28</sup>: Խոսքը տվյալ դեպքում, ինչպես նշում է Ս. Ավագյանը<sup>29</sup>, Ջաքարե և Իվանե իշխանների կողմից վաղօրոք հաստատված սահմանների մասին է: Մի այլ դեպքում սահմանը հաստատվել է տեղական իշխանությունների կողմից. «Այս սնուռս Ղափարի Զուրապն մելիք Ղորխմազ-բեկի հրամանաւն էրեկ հաստատեց»<sup>30</sup>: Սահմանների որոշման (սահմանագծման) փաստաթղթերը կազմվել և հաստատվել են բազմաթիվ վկաների ներկայությամբ: Այսպես, Տաթևի վանքի սահմանների վերոհիշյալ վավերագրի հաստատմանը վկա են եղել 9 իշխան և հոգևոր դասի երկու ներկայացուցիչ:

Սահմանագծման փաստաթղթերը ավարտվում էին դրանք կազմելու և հաստատելու տարեթիվը նշելով՝ «Սա կատարվեց հայոց երեք հարյուր հիսունհինգ թվականին»<sup>31</sup>:

Սահմանների նկարագրության դեպքերի ենք հանդիպում նաև հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: Դրանցում բերված մի քանի տողերը վկայում են, որ անշարժ գույքի գործարքների ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել սահմանված կարգով սահմանների նկարագրությանը. «Ի ՌԿ (1611) թվականութեանս Հայոց ես՝ ըռագմիրանցի մելիք Բարսամ և իմ եղբայր Փանոս վեր առինք Փոս արտ՝ Յվամէջու առվի տակն է՝ թումբով և սնուրով ոխվ [վակֆ] արինք Չադր Ս. Նշանայ: Ով որ ծախէ կամ գրավէ անէճք յԱստուծոյ և Նոյ նահապետէ և հայր Աբրահամէ առցէ. ամէն»<sup>32</sup>:

Մի շարք նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սահմանները նշելու համար օգտագործվել են սահմանանշաններ ինչպես քարից, այնպես էլ փայտից: Դրանք կիրառվել են այն կետերում, որտեղ վիճելի հարցեր են եղել, կամ էլ բացակայել են տեղանքի լավ արտահայտված տարրերը: Ընդ որում, դրանք եղել են ինչպես ստորգետնյա (այսինքն՝ որոշակի խորությամբ թաղվել են հողի մեջ) և վերգետնյա՝ պատրաստված քարից կամ փայտից: Ստորգետնյա սահմանային նշանի մասին է վկայում Սանահնի հիշատակարանում 1642-1666 թթ. թվագրված փաստաթուղթը՝ «Մնուռն հաստատեցինք եւ անձող թաղեցինք արեւելից կողմն...»<sup>33</sup>:

Սահմանների նկարագրության նույն սկզբունքը կիրառվել է նաև եկեղեցու թեմերի, վիճակների սահմանների նկարագրության ժամանակ. «Վերոյգրեալ թեմքն են այսոքիկ. Զիլդու գետի յայն կողմն, Չիպուղլուի ձորովն, Յերգատուկին վերայ Սարույերն, Ղադուլլին, Յելու դարեն մինչ ի Ղարսա եւ Զավախէթու սինուռն հաստատեցաք սուրբ տանս»<sup>34</sup>:

<sup>28</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Ե., 1961, էջ 216:

<sup>29</sup> Ավագյան Ս. Ա. Վիճագրական պրպտումներ, Ե., 1986, էջ 103:

<sup>30</sup> Յիշատակարան Սանահնոյ վանից, 2007, էջ 148:

<sup>31</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 214:

<sup>32</sup> Հայերեն ձեռագրերի ՏԷ դարի հիշատակարաններ, 1601-1620 թթ., հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ե., 1974, էջ 408-409:

<sup>33</sup> Յիշատակարան Սանահնոյ վանից, էջ 146:

<sup>34</sup> Ղափարյան Կ. Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, էջ 116:



*Այսպիսով, հայոց սովորությանն նորմերը և հետագայում էլ սկսած XI դ. կիրառության մեջ մտած՝ Մխիթար Գոշի և Մմրատ Սպարապետի Դատաստանագրքերի՝ սահմանների վերաբերյալ հողվածները միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայի հայկական պետությունում եղել են նորմատիվ իրավական փաստաթուղթ, որի պահանջների համաձայն էլ նկարագրվել և հաստատվել են ինչպես վարչատարածքային ու սեփականության միավորների, այնպես էլ եկեղեցու թեմերի սահմանները:*

*Այս փաստերի առկայությունը մեզ թույլ է տալիս պնդելու, որ միջնադարյան Հայաստանում և Կիլիկիայի հայկական պետության մեջ գոյություն է ունեցել հողաշինարարական ծառայություն, որի գործառույթների մեջ է մտել նաև սահմանագծման փաստաթղթերի համար անհրաժեշտ նյութերի ու տվյալների հայթայթումը և սահմանագատման աշխատանքների իրականացումը:*

**ЗАКОНОДАТЕЛЬНОЕ РЕГУЛИРОВАНИЕ ГРАНИЦ  
АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНЫХ ЕДИНИЦ  
И СОБСТВЕННОСТИ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ**

ЭФЕНДЯН П. С., ДАВТЯН С. Р.

**Резюме**

История землеустройства Армении по сей день нуждается в комплексном изучении. Наличие богатейших историографических и архивных материалов свидетельствует о том, что земельные отношения, в том числе разграничительное и законодательное урегулирование границ собственности в средневековой Армении осуществлялось, согласно требованиям законодательных норм того времени, на основе картографии и геометрии.

Изучение многочисленных историографических и юридических материалов приводит к заключению, что в средневековой Армении законодательно регулировались как административные границы, так и границы недвижимости.